ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Թեոֆարմա Իմպորտ ՍՊԸ-ն ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/29 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
56	"Ներարկիչ պոմպ-դոզատոր՝ Benevision uSP	Shenzhen Mindray Bio-Medical Electronics Co., Ltd.	"Ներարկիչ պոմպ-դոզատոր՝ նախատեսված բժշկական նպատակներով հեղուկների ճշգրիտ դոզավորման համար: Հոսքի արագություն (Flow Rate)՝ 0.01-ից 2300 մլ/ժամ: Ներարկիչի ծավալ (Syringe Size)՝ 2, 3, 5, 10, 20, 30, 50/60 մլ: Հոսքի ճշգրտություն՝ ±1.8%: Աշխատանքային ռեժիմներ՝ Rate mode, Dose Mode, Time mode, Dose Time Mode, Sequential Mode, Intermittent Mode, Loading Dose Mode, Ramp Mode, Micro-infusion Mode, TIVA Mode, ձայնային և տեսողական ազդանշաններ: Սնուցման լարում՝ 220 Վ, 50/60 Հց: Էներգիայի սպառում՝ մինչև 25 Վտ: Լիթիումային մարտկոցի առկայություն (Lithium Battery), 2000 մԱժ (mAh): Աշխատանքային ժամանակ (Battery Life)՝ 6.5 ժամ (կախված հոսքի արագությունից և ծանրաբեռնվածությունից): Լիցքավորումը՝ սարքը էլեկտրական ցանցին միացնելու դեպքում: Մարտկոցի անվտանգության համակարգ՝ գերլիցքավորման և գերբեռնվածության պաշտպանություն: Ավտոմատ անցում ցանցային սնուցումից մարտկոցի: Էկրան և կառավարում՝ ցուցադրման ձևաչափ՝ LED/LCD: Ցուցադրվող տվյալներ՝ հոսքի

			արագություն (Flow Rate) 0.01-ից 2300 մլ/ժամ, մնացորդային ծավալը ներարկիչում, ընդհանուր ներարկված ծավալը, ժամանակի մնացորդ մինչև ներարկման ավարտը: Հնարավոր սխալների և խափանումների հաղորդագրություններ: Էկրանի չափսեր՝ 3.5 դյույմ: Տառերի/սիմվոլների տեսանելիություն՝ մեծ և հստակ, հարմար բժիշկների համար: Կառավարման ինտերֆեյս՝ ներկառուցված հպման կամ կոճակների միջոցով կառավարում: Հստակ և հարմարավետ մենյու համակարգ: Լուսավորության կարգավորում՝ ավտոմատ կամ ձեռքով: Լավ տեսանելիություն ցանկացած լուսավորության պայմաններում: Էկրանի ցուցադրման ռեժիմներ՝ նորմալ աշխատանքային ռեժիմ, ալարմի ռեժիմ՝ սխալի/խոչընդոտի դեպքում, սպասարկման ռեժիմ (մենյու կարգավորումների համար), ցուցադրվող տվյալներ՝ հոսքի արագություն, ներարկման ժամանակ, դոզա, շպրիցի ծավալ: Անվտանգության համակարգ՝ օդի հայտնաբերման և խոչընդոտի սենսորներ, ցածր մարտկոցի, սխալի և այլ ռիսկերի ազդանշաններ, աշխատանքի ավտոմատ դադարեցում վտանգի դեպքում: Քաշ՝ 1.7 կգ: Օգտագործման միջավայր՝ օդի ջերմաստիճան՝ +5°C-ից +40°C, օդի խոնավություն՝ մինչև 90%, առանց կոնդենսացիայի: Լրացուցիչ հատկություններ՝ կարգավորվող հոսքի արագություն, ձայնային ազդանշաններ ավարտի, սխալի դեպքում: Հարմարավետ ինտերֆեյս և կարգավորիչ կոճակների առկայություն: Հավաստագրեր և համապատասխանություն՝ համապատասխանություն միջազգային ստանդարտներին (CE, ISO): Ապրանքը նոր է և չօգտագործված, փակ գործարանային տուփով, չվերաթողարկված: Երաշխիքային ժամկետ՝ 12 ամիս:"

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Теофарма Импорт ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/29 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
56			